Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

Ազատություն ռադիոկայանի լրագրող Կարինե Սիմոնյանից

Հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

2020 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչությունում հարուցվել է քրեական գործ պատերազմի օրերին Գերմանիայից Վանաձոր ուղարկված մոտ 2500 կգ քաշով հումանիտար օգնության առնչությամբ: Դրա մի մասը բաժանվել էր կարիքավորներին: Մյուս մասը բողոքների հիման վրա կապարակնքվել է մարզպետարանի նկուղային հարկում: Հետագայում քրեական գործը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Խնդրում եմ պատասխանել Ազատություն ռադիոկայանի հետևյալ հարցերին:

1. Մինչև երբ է կապարակնքված եղել նկուղի դուռը: Երբ է բացվել և ինչ հիմնավորմամբ:
2. Ինչ է եղել նկուղում բացելուց հետո՝ քանի՞ անուն ապրանք և որքան: Խնդրում եմ տրամադրել եղած ապրանքների ցանկը, որոնք եղել է կողպած դուռը բացելուց հետո:
3. Արդյո՞ք Ձեզ համար կասկած առաջացնող իրեր կային, որոնք ըստ Ձեզ չէին կարող համարվել առաջին անհրաժեշտության ապրանք: Եթե այո՝ խնդրում եմ թվարկել դրանք, ինչ եք արել այդ ապրանքը:
4. Ինչ է արվել նկուղում եղած ապրանքը:
5. Ում է բաշխվել, արդյո՞ք այդ ցուցակները հրապարակվել են որևէ տեղ: Եթե ոչ, ապա խնդրում եմ տրամադրել Ձեր կազմած ցուցակները ստացականներով կամ ստացողների ստորագրություններով, որտեղ նշված է, թե ով ինչ ապրանք է ստացել:
6. Ինչ եք կարծում, արդյոք, պատերազմի օրերին որևէ չարաշահում եղել է մարզի ղեկավարի և նրա ենթակաների կողմից օգնությունը բաշխելիս:
7. Եթե ոչ՝ ինչո՞ւ կասեցվել էր հումանիտար օգնության բաշխումը:

Խնդրում եմ հարերին պատասխանել հնարավորինս շուտ:
Հարգանքներով՝ Կարինե Սիմոնյան